ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՎՄԱՃԱՆԵԱՆ - ԺԸ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Համառօտ կենսագրութիւնը[1]**.**

Յովհաննէս (աւագանի անունը՝ Յարութիւն) Թովմաճանեանը ծնուել է 1717 թ. ապրիլի 22-ին, Կ. Պոլսում մահտեսի Աբրահամ ամիրա Թովմաճանեանի ընտանիքում («հայրենեօք յերկրէն Թամգարայ»[2] *եւ* «ի Հայոց ուղղափառ ազգէ»)[3]: *6-7 տարեկանում սկսեց ուսում ստանալ Սամաթիայի Ս. Գէորգ եկեղեցում, իսկ 12 տարին լրանալուն պէս՝ ուսանել ակնագործութեան* («ճէվահիրճուբեան») *արհեստը: 1732 թ., Յոբելեան տարուայ*

---

1 *Յովհաննէս Թովմաճանեանի կենսագրական տեղեկութիւնները հիմնականում քաղել ենք իր ինքնագիր «Պատմութիւն»-ից (տե՛ս Ս. Ղազարի Մխիթարեան մատենադարանի, ձեռ. թիւ 1688): Քանի որ Միաբանութեան յանձնարարութեամբ հրատարակութեան ենք պատրաստել այս բնագիրը, այստեղ անդրադառնում ենք կենսագրական հիմնական տեղեկութիւններին:*

2 *Հայաբնակ աւան Սեբաստիայի վիլայէթում, Շապին-Կարահիսարից հիւսիսարեւելք, կամ այս բնակավայրի արուարձաններից մէկը (տե՛ս* **Հ. Ղ. Ինճիճեան,** *Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի,* Մասն առաջին, Ասիա, հտ. Ա, Վենետիկ, 1806, էջ 326-327, **Գ. Սրուանձտեանց,** *Վիճակագրութիւն Շապին Գարահիսարի. Թեմք,-* **Գ. Սրուանձտեանց,** *Երկեր, հտ. 2, Եր., 1982, էջ 162. նախկին հրատարակութիւնը տե՛ս* Դիւան Հայոց պատմութեան, *գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 529-536, նաեւ* **R. H. Kévorkian, P. B. Paboudjian,** Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide, Paris, 1992, p. 249):

3 *Իմա՛ հայ կաթողիկէ: Համաձայն Կ. Պոլսում Հռոմի եկեղեցու կողմից ուղարկուած առաքելական այցելու Դաւիթ կարմելիտեանի տեղեկութեան, 1700-ական թթ. առաջին քառորդում քաղաքում կային մօտ 8000 հայ կաթողիկէներ (տե՛ս* **G. Hofmann.** Il vicariato apostolico di Constantinopoli 1453-1830. Roma, 1935, p. 23):